

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձեւավորման եւ տարածման կարգի մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 24-րդ հոդվածի համաձայն՝ Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման կարգը սահմանելու նպատակով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվություն»՝ վիճակագրական տեղեկատվություն, որը ձեւավորվում է լիազոր մարմինների կողմից վիճակագրական աշխատանքների ազգային ծրագրերի շրջանակներում եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

«Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվություն»՝ վիճակագրական տեղեկատվություն, որը ձեւավորվում է Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության, միջազգային կազմակերպությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության եւ անդամ պետությունների օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից ստացված այլ տեղեկությունների հիման վրա.

«լիազոր մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմինները, այդ թվում՝ ազգային (կենտրոնական) բանկերը, որոնց վերապահված են անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվություն ձեւավորելու գործառույթները:

3. Անդամ պետություններին եւ Հանձնաժողովին փոխադարձ առեւտրում անդամ պետությունների միջեւ փոխադրվող ապրանքների վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տեղեկատվություն ապահովելու նպատակով լիազոր մարմիններն իրականացնում են այլ անդամ պետությունների հետ ապրանքների փոխադարձ առեւտրի վիճակագրության վարում:

4. Ապրանքների փոխադարձ առեւտրի վիճակագրության վարումն իրականացվում է լիազոր մարմինների հետ՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող մեթոդաբանությանը համապատասխան:

5. Լիազոր մարմինները Հանձնաժողովին են ներկայացնում անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվությունը՝ վիճակագրական ցուցանիշների ցանկի համաձայն:

6. Վիճակագրական ցուցանիշների ցանկը, անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվությունը ներկայացնելու ժամկետները եւ ձեւաչափերը հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ լիազոր մարմինների համաձայնությամբ:

7. Հանձնաժողովն իրավունք ունի լիազոր մարմիններից պահանջելու անդամ պետությունների այլ պաշտոնական վիճակագրական տեղեկատվություն, որը ներառված չէ վիճակագրական ցուցանիշների ցանկում:

8. Լիազոր մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ ապահովելու անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ամբողջականությունը, հավաստիությունը եւ Հանձնաժողովին ժամանակին ներկայացնելը, տեղեկացնում են Հանձնաժողովին պաշտոնական վիճակագրական տեղեկատվությունը սահմանված ժամկետներում ներկայացնելու անհնարինության մասին:

9. Սույն Արձանագրության դրույթները չեն տարածվում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկատվություն համարվող՝ անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության վրա:

10. Հանձնաժողովն իրականացնում է Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում, կուտակում, համակարգում, վերլուծություն եւ տարածում, լիազոր մարմինների հարցումների հիման վրա նշված տեղեկությունների տրամադրում, ինչպես նաեւ վիճակագրության ոլորտում լիազոր մարմինների տեղեկատվական եւ մեթոդաբանական փոխգործակցության կորդինացում՝ սույն Արձանագրության շրջանակներում:

11. Հանձնաժողովը մշակում եւ հաստատում է Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման մեթոդաբանությունը, որը կազմվում է Հանձնաժողովին տրամադրվող՝ անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

12. Հանձնաժողովը ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության համադրելիությունն ապահովելուն՝ լիազոր մարմինների կողմից միջազգային մակարդակում միասնական, համադրելի ստանդարտների կիրառման առնչությամբ համապատասխան առաջարկություններ ընդունելու միջոցով:

13. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության տարածումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող վիճակագրական աշխատանքների ծրագրին համապատասխան, Հանձնաժողովի պաշտոնական հրատարակություններում հրապարակելու եւ համացանցում Միության պաշտոնական կայքէջում տեղադրելու միջոցով:

14. Հանձնաժողովը լիազոր մարմինների հետ համատեղ մշակում եւ հաստատում է վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման ծրագրեր: